

ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԲԱՌԵՐԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

Բանասիր. գիտ. դոկտոր Ա. Ս. ՄԱՐԿԵԼՅԱՆ

14. ԳՈՒԼԻ

Գուլի բառը հնդկահավի և հնդկահավին կամ հնդկահավերին կանչելու (իմա՝ ձայնարկության) նշանակությամբ գործածվում է Դորիսի բարբառի որոշ գյուղական (Խոնածախ, Վաղատուր, Խոզնավար, Քարաշեն և այլն) խոսվածքներում, ինչպես՝ Մէր հորվանին գուլին հո՛ւ վա մօրթալ (—Մեր հարեվանի հնդկահավը ո՞վ է մորթել), Լ'նդրրանց գուլէքը մէրան շատ էն (=նրանց հնդկահավերը մերից շատ են), Գուլօցը գուլի-գուլի րրա, թօղ կ'ան (=Հրնդկահավերին գուլի-գուլի արա, թող դան) և այլն:

Հիշյալ երկու նշանակությամբ որոշ խոսվածքներում գործածվող գուլի բառը մինչև այսօր որևէ բառարան չի մտել, և հայտնի չէ, թե ինչ ծագում ունի: Բայց գոյականից բացի [հմմտ. գուլի-գուլու(ն)..., գուլէք(ը)-գուլօցը...] իբրև նաև ձայնարկություն գործածվելու հանգամանքը ցույց է տալիս, որ այն առաջ է եկել բնածայնության հիման վրա և այլ բան չէ, քան հենց հնդկահավի հանած ձայնի պատկերումը, հմմտ. բու>պէվ||պօվ, կկու>կուկու, լուպուպ>պուպու||հուպուպ և այլն:

Իսկ դա, իհարկե, ինչ-որ արտակարգ կամ անսովոր բան չէ. ինչպես այլ բարբառներում, այնպես էլ Դորիսի բարբառում քիչ չեն այն բառերը, որոնք բնածայնական ծագում ունենալով՝ ձայնարկությունից՝ որևէ կենդանու, թռչունի կանչելու ձայնից բացի գոյականի նշանակություն են արտահայտում՝ անվանելով համապատասխան ձայնով հատկանշվող կենդանին կամ թռչունը: Այսպես՝ բիծի նշանակում է և՛ հորթ, կով (մանկ.), և՛ հորթին, կովին կանչելու ձայն, գիղի նշանակում է և՛ դառ, ոչխար (մանկ.), և՛ դառին, ոչխարին կանչելու ձայն, փիսի նշանակում է և՛ կատու (մանկ.), և՛ կատվին կանչելու ձայն և այլն:

Ճիշտ այդպես էլ գուլի և՛ հնդկահավ թռչունը, և՛ նրան կանչելու ձայնն է նշանակում, որը ևս ոչ պատահականորեն առավելապես կրկնությամբ է գործածվում, հմմտ. գուլի և գուլի-գուլի, բիծի և բիծի-բիծի, գիղի և գիղի-գիղի, փիսի և փիսի-փիսի և այլն:

Այսպիսով, միանգամայն ակներև է գուլի բառի բնածայնական ծագումը. մնում է միայն ավելացնել, որ նա համեմատաբար ուշ առաջ եկած բառ է և գալիս է այն ժամանակվանից, երբ հնդկահավը մուտք է գործել Զանգե-

* Սկիզբը տե՛ս «Պատմա-բանասիրական հանդեսի» 1971 թ. N 3-ում (էջ 210—220) և 1973 թ. N 4-ում (էջ 127—136):

1 Բնածայնական ծագում ունեցող բառերի մասին տե՛ս Հ. Լ. Մանուկյան, Հայոց լեզվի պատմություն, 1 մաս, Երևան, 1940, էջ 113—116:

լուր, որի խոսվածքների մեծ մասում էլ ոչ թե զուլի, այլ ոռոսերենից փոխառյալ հինդուշկա||հունդուշկա <Индюшка> բառն է գերծածվում²:

15. հԻՋՆԸԶԻՏ

Առաջին անգամ արձանագրվել է Ս. Ամատունու «Հայոց բառ ու բանում» իբրև բայական հարադրական բարդության հարադիր. «Խոզերհատ ըլնել Գնձկ. Բանանց. ժուռ ու մուռ մեռնել: Մարկոսը խոզնորհատ էլավ: Խոզնորհատ ըլնես»³: Հմմտ. «Խոզերհատ լինել, Շնչասպառ լինել, Երիտասարդ հասակում մեռնել, ժուռ ու մուռ մեռնել: Խոզերհատ ըլնես (անեծք)»⁴:

Այդ բառը, որի ծագումն ու կազմությունը մինչև օրս չի բացատրված, Գանձակի (Կիրովաբադի) խոսվածքից բացի լայնորեն զործածվում է նաև բարբառախոս այլ վայրերում: Խոզերհատ ինի||խոզերհատ ինէ||խոզերհատ ըլնել, այլև խոզերհատ տառնա||տրէռնալ հարադրական բարդությունը իբրև անեծք՝ «ծաղիկ հասակում տանջանքների ենթարկվելով՝ մեռնել, ոչնչանալ, տանջամահ լինել» նշանակությամբ նույնպես շատ զործածական է Ղարաբաղի բարբառի Մարտակերտի, Շահումյանի, Խանլարի, Շամխորի, Դաշքեսանի⁵, ինչպես նաև Շամշադինի և Իջևանի խոսվածքներում: Բայց տվյալ դեպքում շատ կարևոր է այն, որ դրանց մեծ մասում խոզերհատ (=խոզերհորհատ) անուրոշ բառը ոչ միայն լինել (> ինէ||ինի||ըլնէլ) կամ դառնալ (> տառնալ||տառնալ||տրէռնալ), այլև անել (< տռնել) բայի հետ է հարադրվում, կազմելով խոզերհատ անել ներգործական սեռի բայը, որ և նշանակում է «մսկին տանջահար անելով սպանել՝ մեռցնել, տանջանքների ենթարկելով շնչակտուր անել, տանջամահ անել», ինչպես՝ Խոզերհատ անելմ Բրէզ (Գանձակ):

Այդ վերջին ձևն իսկ ըստ էության բացում է խոզերհատ (=խոզերհորհատ) բառի ծագման գաղտնիքը. ինչպես արտաքին կառուցվածքն է ցույց տալիս, նա ոչ թե արմատական, այլ երկու արմատից կազմված բարդ բառ է, որի երկրորդ բաղադրիչը՝ հատ-ը, լանջուշտ, գրաբարյան հատանել («կրտրել, կտրտել...») բայի արմատն է⁶ և, իբրև այդպիսին, արդի լեզվական զոհացողությամբ որքան պարզ ու հասկանալի, այնքան առաջին՝ «խոզեր» բաղադրիչը «մութ» ու առեղծվածային է մեղ համար:

Այդ հարց է ծագում. ի՞նչ կարող է եղած ու նշանակած լինել այդ բառը, որ հատ-ի հետ բաղադրվելով՝ տվել է խոզերհատ (=խոզերհորհատ) բարդությունը, որն էլ իր հերթին բացառապես անել և լինել կամ դառնալ բայերի հետ զործածվելով՝ համապատասխանաբար «տանջահար անելով սպանել՝ մեռցնել, տանջամահ անել» կամ «տանջահար լինելով մեռնել-ոչնչանալ, տանջումահ լինել» նշանակություններն է արտահայտում:

² Գորիսի բարբառի մի բանի խոսվածքներում, սակայն, երկու ձևերն էլ հավասարապես զործածական են:

³ Ս. Ամատունի, Հայոց բառ ու բան. Վաղարշապատ, 1912, էջ 293:

⁴ Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հատ. 2, Երևան, 1944, էջ 302:

⁵ Այդ վայրերում հիշյալ ձևերի զործածության մասին մեղ տեղյակ է պահել Ղարաբաղի բարբառի քաջ դիտակ Կ. Ս. Դավթյանը, որին և մեր շնորհակալությունն ենք հայտնում:

⁶ Գորիսի բարբառը այդ հատ արմատով ունի հատ անել («ծաղկել՝ բուրդը բարակ ճիպոտով ձեծել-փափկացնել»), օրինակ՝ Պուրթը հատ անել:

Պնտք է ուղղակի ասել, որ դա պարսկերենից փոխառյալ խառազան միջին պրոսկ. *xarazan, ղնդ. *xarāzana (<xar «էջ» az, a] «բշել, վարել»⁷ բառն է⁸, որն իր բուն «էջ քշող. էջ քշելու գործիք» իմաստից բացի նշանակել է նաև «մտրակ», որով անցյալում, անշուշտ, ծեծել, դանաճարել, տանջել, տանջամահ են արել «հանցավորներին»։ Եվ ոչ պատահականորեն հենց հին հայերենում՝ գրաբարում, խառազանել (<խարազան-ի-ել) նշանակել է «խարազանաւ հարկանել, ձողկել» («Յթեալ, ապտակեալ, խարազանեալ. իս. նս»), իսկ խառազանահալած առնել (=խարազանահալած անել)⁹՝ «խարազանաւ հալածել» («խառազանահալած գտնեանսն և զվաճառողսն ի հօրդ տանէն լսեմ աւարեալ. Սկևռ. աղ»)¹⁰։

Ուրեմն՝ խորզնրհատ (<խորզնրհատ<խարազանահատ) բարդության մեջ իմաստաբանական տեսակետից լրապես արդարացվում է պատժի գործիք նշանակող խառազան բառի գործածությունը։ Ինչ վերաբերում է արտաքին՝ հնչյունական կազմին, պետք է ասել, որ այդ տեսակետից ևս նա ոչնչով չի հակասում այն բարբառների ու խոսվածքների հնչյունափոխական օրենքներին, որոնք բույական հարադրության մեջ պահում ու գործածում են խորզնրհատ (=խորզնրհատ)<խարազանահատ բառը։ Նրանցում, ինչպես հայտնի է, ա-ն շնչադարձությամբ լինելով՝ ազատորեն վերածվում է Ը-ի, իսկ Բ-ն էլ շատ զեպքերում դառնում է Ռ, հմմտ. խարազան>խորզնրհատ||խորզնրհատ, մեծահատ (կարկուտ)>մրծրհատ. հարցանել>հրցնել||հրցնել, աղբահար>լխպրհար, պարապութիւն>հրպրպպօթն, արիւնաթաթախ>բոնրքաթախ. խորձ(ն)>խօթնր||խօթնր, պրծանիլ>պրծնել||պրծնել և այլն¹¹։

Այսպիսով՝ խորզնրհատ (=խորզնրհատ) բառի իմաստաբանական ու հնչյունական վերլուծությունը հիմնավորապես ցույց է տալիս, որ այն իրոք, սերում է նախավոր խառազանահատ բառից, որ, դժբախտաբար, գրավոր չի ավանդվել մեզ։ Հետագային ժամանակներից սկսած այդ բառը հարադրավոր բայեր կազմելով անել (<առնել) և լինել (այլև՝ դառնալ) բայերի հետ՝ խարազանահատ առնել>խարազանահատ անել> խորզնրհատ անել, խարազանահատ լինել>խորզնրհատ լինել||լինել, դրանցով իսկ արտահայտել է պատժի այն խիստ դաժան գործողությունը, որ իրագործվել է խարազանի՝ մտրակի միջոցով։ Ըիշտ է, հետագայում վերացել է պատժի այդ ձևը, բայց այն հասկանալի պատճառով շարունակել է պահպանվել անեծքներում. բացառություն է կազմում թերևս Գաւթակի (իմա՝ Կիրովոսթադի) խոսվածքը, ուր խորզնրհատ անել և խորզնրհատ լինել հարադրավոր բայերը գործածվում են նաև «ջարդութորդ անել, ջարդ ու փշուր անել» (քամին ծառէրը խորզնրհատ ա ըրալ), «ջարդ ու փշուր լինել, ջարդութորդ լինել» բնդհանուր նշանակությամբ։

16. ԿԻԶԵԼ

Իր «Հայերեն զավառական բառարանում» մեծանուն հայագետ Հր. Աճառյանը *կիզել բառը «Ղրբ. վախնալ, Հորիցդ կիզում ես հա» տեղեկանքով

⁷ Տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հատ. 2, Երևան, 1973, էջ 340։

⁸ Տե՛ս «Նոր բառգիրք Հայկազան լեզուի», հատ. 1, Վենետիկ, 1836, էջ 929։

⁹ Բերված խառն բնույթի այդ օրինակների մի մասի համար տե՛ս Կ. Ս. Գալթյան, Հեռնային Ղարաբաղի քարթուսյին քարտեզը, Երևան, 1966։

ներկայացրել է իբրև առանձին ղլխարառ¹⁰ և դասել այն արմատական ձևերի շարքը, որոնք «զրարարի մեջ գոյություն չունեցող բոլորովին նոր արմատ մը երևան կը հանեն»¹¹: Դա այդպես է բնկալել նաև ակադեմիկոս Ստ. Մալխասյանցը, Հր. Աճառյանին հետևելով՝ նույն բառը գրեթե նույն բացատրությամբ ու վկայությամբ փոխանցել իր բառարանը «ԿԻՋԵԼ, ԵԳԻ, ՇԲ. Վախենալ, երկյուղ քաշել: Հորիցդ կիզում ես»¹²:

Երկու վաստակաշատ լեզվաբանների հիշատակած այդ կիզել բառը պարզապես զրարարյան զոզել (<զոզ «մեղ, շեռ, ջրվաթ» + ել) «միզել» բախի՝ բարբառային մի արտահայտությունն է, որ գործածվում է Ղարաբաղի բարբառի շատ քիչ խոսվածքներում¹³: Դրան հակառակ, Ղարաբաղի բարբառի խոսվածքների մեծ մասում, ինչպես նաև Գորիսի բարբառում զոզել բառը հանդես է գալիս կ'ո գէլ || կո' գէլ || կ'ո գիլ || կո' գիլ ձևափոխությամբ, որն իր հիմնական «միզել» իմաստից բացի երկրորդաբար կամ փոխաբերաբար նշանակում է նաև «վախենալ, մի բանից խիստ զարհուրել, խիստ վախ չգալու զեպքում գեզը՝ մեզը պահել չկարողանալ»¹⁵. օրինակ՝ Ընդրազ զաճման չիմունքրն ալ տրկրրնէրին կ'ո գոմ էն (= նրա ահից սարսափիդ բոլորն էլ տակները զոզում են, այսինքն՝ վախենում են), Ըսկրսօրան հարթնր կիզում ա (= Սկսորջից հարսը զոզում է, այսինքն՝ վախենում է) և այլն:

17. ՀԱԽԵԼ

Առաջին անգամ նկատել է Ս. Ամատունին՝ համարելով լոռու խոսվածքին հատուկ բառ: «Հախել. Լոռի. բնկերակից զութանավորների ամեն մեկի վարելիք հողը: Թորոսի հախկը մնաց վարելու»¹⁶: Այդպես է բացատրել նաև Ստ. Մալխասյանցը, որը միաժամանակ ծագման վրա ուշադրություն դարձնելով՝ ղլխաբառից անմիջապես հետո, փակագծերի մեջ կասկածով նշել է. «գուցե Հախք, Հախ'ից»¹⁷:

Այսպիսով անորոշ ու հայտնի չէ, թե ստույգ ինչ ծագում ունի հախել բառը, որ շատ սովորական է նաև Գորիսի բարբառում, ինչպես, օրինակ՝ Սրբվէն հախկը վարիլ չէն [= Սարուի (իմա՝ շեկի՝ շեկ մարդու) վարելահողը չեն վարի], Ծեր հախկը էքուց պէտի վարէն (— Ձեր վարելահողը էքուց պիտի վարեն) և այլն:

Բայց ինչպես լոռու խոսվածքին, այնպես էլ Գորիսի բարբառին բնորոշ այն հնչյունափոխական օրենքը, ըստ որի միավանկ բառերի ղ վերջնահնչյուն-

¹⁰ ՏԵ՛ս Հր. Աճառյան, Հայերեն պատմական բառարան, Թիֆլիս, 1913, էջ 569:

¹¹ ՏԵ՛ս նույն տեղում, էջ 21:

¹² ՏԵ՛ս Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հատ. 2, Երևան, 1944, էջ 434:

¹³ Դոս բառը, որի առաջին գործածության համար վկայաբերվում է «Գիրք վաստակոցը» հայերենի ղեռնա շտուգարանված արմատներից է (տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հատ. 1, Երևան, 1971, էջ 571):

¹⁴ Այդ մասին ես մեղ տեղեկացրել է բարբառագետ Կ. Ս. Դավթյանը, հայտնելով միաժամանակ, որ Հր. Աճառյանի նկատած կիզել «վախենալ» բառը իրոր զոզել-ի ձևափոխություններից մեկն է:

¹⁵ Նույն նշանակություններով հիշյալ բարբառներում գործածվում է նաև ցէթել (<ցալ-տել) բայը:

¹⁶ ՏԵ՛ս Ս. Ամատունի, Հայոց բառ ու բան, էջ 383:

¹⁷ ՏԵ՛ս Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հատ. 3, Երևան, 1944, էջ 12:

նր և երբեմնի՝ հոգնակիակերտ մասնիկը գուցորդվելիս տալիս են $\text{խ} + \text{կ}$ ($< \text{ղ} + \text{ք}$), հմմտ. կողք ($< \text{կող} + \text{ք}$) $>$ կօխկ(ր), նեղք ($< \text{նեղ} + \text{ք}$) $>$ ճէխկ(ր), մեղք ($< \text{մեղ} + \text{ք}$) $>$ մէխկ(ր), շողք ($< \text{շող} + \text{ք}$) $>$ շօխկ(ր), փողք ($< \text{փող} + \text{ք}$) $>$ փօխկ(ր), խաղք ($< \text{խաղ} + \text{ք}$) $>$ խախկ և այլն, բացում է հախկ բառի շղարշը և ցույց տալիս, որ դա ծագում է $\text{նաղ} + \text{ւ}$ $>$ նաղք ձևից, որտեղ ևս միանգամայն օրինաչափորեն $\text{ղ} + \text{ւ}$ $>$ $\text{խ} + \text{կ}$ հնչյունափոխությունն է տեղի ունեցել:

Ուրեմն՝ մնում է պարզել՝ հնչյունափոխական օրենքով հիմնովին հաստատվող հաղ + ք $>$ հաղք $>$ հախկ(ր) բառը ներքին-բովանդակային կողմով ևս հիմնավոր կարելի է ճանաչել, թե ոչ. եթե այո, ապա այդ դեպքում նախավոր նաղ արմատը ի՞նչ է նշանակել և զրաբարյան որ բառին է հանգում:

Իրա լավագույն պատասխանը տալիս են նոր հայկազյան և Առձեռն բառարանները. որոնցից վերջինը հաղ զլխաբառի իմաստներից մեկն էլ համարում է հաճախակ-ը¹⁸, որ նշանակում է «ինչ ի միջի դեի միաբան խորհրդով ի մի վայր եկելուց, մանաւանդ ի պէտս խրախուսեալն և բաժին առկեալ յանցն իւրոց. վիճակ. զլուխ դրամոյ. զրաւ. դաշն. միաբանութիւն... փայլ»¹⁹. «1. գ. Մէջ դրած բաժին, զլուխ դրամոյ, զրաւ, դաշն, միաբանութիւն:—2. ա. մասնակից, գործակից»²⁰, Հմմտ. նաև նոր հայկազյան բառարանի՝ հաղ բառի համար բերած հետեւյալ՝ «խսկ փիլ. իմաստն. ուր ասի Հանգանակս ի մէջ արկանելով. ի լս. դնի նաղս »²¹ վկայությունը, որ առանձին արժեք է ներկայացնում հոգնակի հայցականի ձևի՝ նաղս -ի մատնանշմամբ:

Այսբանից հետո ամենեին դժվար չէ նկատել բարբառային հախկ ($< \text{հաղ} + \text{ք}$) և զրաբարյան հաղ + ք բառերի միջև եղած որոշակի իմաստային կապն ու ընդհանրությունը: Հախկ(ր) բառով ևս արտահայտվել է յուրատեսակ դաշն ու միաբանություն, յուրատեսակ հանդանակություն կամ գործակցություն. անեցած միջոցների ներդրումով գոթանավորներն ընկերակցել կամ դաշն են կնքել իրար հետ, մի օր՝ մեկի, մի օր՝ մի ուրիշի, մի օր՝ մի երրորդի և այլն վարելահողը՝ վարելիք հողաբաժինը վարելու համար: Այդ հիման վրա էլ հենց հաղ + ք $>$ հաղք $>$ հախկ(ր) բառը²² ստացել է «ընկերակից գոթանավորներից ամեն մեկի վարելիք հողը» նշանակությունը, որը և մի անգամ ևս ցույց է տալիս ու հաստատում, որ այն ամենեին չի տուճվում արեւելյան փոխառյալ հախ արաբ. hakk («1. արդար, տեղին. 2. վարձ. աշխատավարձ, արդար պահանջ») բառին և հանդիսանում է քիչ բարբառներում ու խոսվածքներում պահպանվող, բայց շատ հին ժամանակներից եկող արժեքավոր բառերից մեկը:

Հարկ է նշել, որ այդ բառը, իր հիմնական նշանակությունից բացի, հախկ ու զրաբարյան հոգնակի հայցականի հախս $<$ հաղս ձևերով գործածվում է նաև «ընկերակից գոթանավորներից յուրաքանչյուրի հողաբաժինը»

18 Տե՛ս «Առձեռն բառարան հայկազեան լեզուի», Վենետիկ. 1865, էջ 460:

19 Տե՛ս «Նոր բառագիրը հայկազեան լեզուի», հատ. 2, Վենետիկ. 1837, էջ 36:

20 Տե՛ս «Առձեռն բառարան հայկազեան լեզուի», էջ 471:

21 Տե՛ս «Նոր բառագիրը հայկազեան լեզուի», հատ. 2, էջ 8:

22 Զր. Աճառյանը Հաղ (հնիս. pel «զարնել») արմատի ծագումը տալիս չի հիշատակել նրա «հանգանակ» նշանակությունը, որպիսի պատճառով էլ, կարծում ենք, Ուղ («կից, միասին, յար») առանձին անգործածական արմատը առաջինից առանձնացրել և շատուգաբանված արմատ է համարել (տե՛ս «Հայերեն արմատական բառարան», հատ. 4, Երևան, 1932, էջ 8):

վարելահողը վարելու հերթը» նշանակությամբ, օրինակ՝ Հախկը ասօր ի՞մն ա թա՞քունը (Հաղթըր այսօր ի՞մն է, թե՞ քունը), Մյուս օրը հախսը իրանն է, այսինքն՝ իր համար պիտի վարէին (ՂԱ)՝²³ Եւ. անշուշտ, ավելի պարտաւորող է բացահայտում հաղթ-ից՝ հախկ-ի և հաղս-ից հախս-ի առաջացումը:

18. ՍԱՔ

Սովորական է Վարաբաղի ու Գորիսի բարբառներում և նշանակում է «իրար վրա դարսած՝ շարված»²⁴: Նույն բայը արմատից են կաղմված Սա-խկ||սախկ|| «իրար վրա կանոնավոր դարսել», Սախկ||սախկ|| «սաք ինք՝(ին)»-էլ «մի կողմի վրա կանոնավոր փոփել, պտտկել (արտի)», սաք-սաք||սաք-սաք «կոկիկ կանոնավոր, իրար վրա կանոնավոր դարսված», սիքսաքէլ||սիքսաքէլ «սաքսաքել՝ իրար վրա կանոնավոր դարսել, դարսոտել»: Գ. Ջահուկյանը զբաղվելով սախ արմատից կաղմված սախկ բառի ստուգաբանությամբ՝ դա «հայերենի ընդհանուր օրինաչափություններից շեղվող և օտար ենթաշերտ չկամ հնդեվրոպական լեզվից հին փոխառություն ենթադրող» արմատների շարքում ներկայացել է իբրև «Հ. Ե. Տ.—հայ ս. շ» հնչյունափոխությամբ հատկանշվող բառ. «Սախկ||սախկ|| «իրար վրա դարսել» (ՂԲԲ).—հ. հնդկ. *sācata* «ուղեկցում է, հետևում է», *sākha* «ուղեկից, բնկեր», լատ. *sequor* «հետևել» և այլն (հ. հ. *seku* «հետևել») (?)»²⁵:

Մենք կարծում ենք, որ սոսկ Վարաբաղի ու Գորիսի բարբառներում պահպանվող և բնավ անկախաբար չգործածվող սախ||սախ արմատը [հմմտ. սախ-սախ||սախ-սախ, սախ||սախ ինք՝(ին)էլ, սախէլ||սաքէլ, սիքսաքէլ||սիքսաքէլ], պարզապես հնիս. *k'er* (*k'r* ստորին ձայնադարձով) «կապ, հյուսվածքի թել, հյուսել, կապել» արմատից²⁶ ծագած սաք + *i* > սաքի բառի՝ ժամանակի ընթացքում կրած բարբառային ձևափոխությունն է: Բսկ դա լավաբույնս հաստատվում է ոչ միայն մի շարք բառերի և ձայնորդի անկման հանրահայտ փաստերով, ինչպես՝ քարշ > քաշ, խարշել > խաշել, Լրք > Լէր|| Բէլի, դուրս > տուս, ի ներքս > ներս > նի (հմմտ. նաև պահք > պախ, պահս > պաս, ապաք > տախ) և այլն, այլև իմաստային այն շատ որոշակի ու ակնհայտ ընդհանրությամբ, որ երևան են հանում սարք—սաք||սաք և համապատասխանաբար զրանցից կաղմված բառերն իրար նկատմամբ:

Այսպես՝ Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանի» հավաստմամբ սաքի նշանակում է «Մի առարկայի մասերի պատշաճ դասավորությունը՝ կցումն իրար հետ այնպես, որ առարկան կանոնավոր կերպով

23 Վերջին օրինակը բերվում է Հայկական ՍՍՀ ԳԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի հրատարակած «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանից» (հատ. III, Երևան, 1974, էջ 256), ուր, սակայն, հախկ-ը և հախս-ը ներկայացված են իբրև իրար հետ կապ չունեցող ու միանգամայն անկախ բառեր (տե՛ս նույն տեղում):

24 Տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն գավառական բառարան, էջ 959: Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հատ. 4, Երևան, 1945, էջ 196: Ի դեպ, Սարք առանձին չի գործածվում, և հետևաբար՝ դրա բացատրությունն էլ պայմանական բնույթ է կրում:

25 Տե՛ս Գ. Բ. Ջահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, 1972, էջ 317, 326:

26 Տե՛ս այդ մասին Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հատ. 4, էջ 123—124, 137—138:

յուր դերը կատարե, ստորվածք», իսկ սա՞ն՝ «իրար վրա դարձած՝ շարված», սաբեկ նշանակում է «Առարկայի մասերը պատշաճ կերպով դասավորել՝ իրար կցել, որպեսզի աշխատել կարողանա», իսկ սա՞նել՝ «իրար վրա դարձել» և այլն²⁷:

Զուգադիր ձևերը, ինչպես դժվար չէ նկատել, բաց էթյան միատեսակ՝ ինչ-որ բաների կանոնավոր, պատշաճ, կարգին դարսվածքի՝ ստորվածքի կամ ինչ-որ բաների կանոնավոր, պատշաճ, կարգին իրար վրա դարսելու նշանակություն են արտահայտում, ակներև դարձնելով այդպիսով իրենց բնորոշությունը ծագումը: Այդ հաստատող շատ հիմնավոր մի այլ ապացույցը տալիս են Ղարաբաղում խոսվող բարբառները, որոնց մի մասում՝ բուն Ղարաբաղի, լադուրի և Շաղախ-Խծաբերդի բարբառներում, Սաբ-սաբ կրկնավոր բարդությունը եթե սաբ-սաբ («ծալեծալ, կանոնավոր դարսված»), ապա Զալվի և Մեհտիչենի բարբառներում՝ սաբ-սաբ, իսկ Մարաղայի բարբառում սաոբ-սաոբ «անաղարտ» ձևերով է գործածվում²⁸: Այստեղից ինքնին հետևում է, որ բուն սաբ բառը բ. ի. անկմամբ սաբ||սաբ է դարձել կրկնավոր բարդության (սարք-սարք > սարք-սարք||սաոք-սաոք > սաք-սաք||սաք-սաք) մեջ ու հենց նրա ընձեռնամբ: Ըստ որում բնորոշ է և այն, որ եթե դարաբաղյան բարբառներում սաբ > սաբ փոփոխության դեպքում ա ձայնավորը նույնն է մնացել, ապա Դորիսի բարբառում այն քմայնացման է ենթարկվել (հմմտ. սաբ > սաբ||սաբ): Ավելացնենք նաև, որ հիշյալ բարբառները սաբ և սաբ||սաբ ձևերից կադմված համապատասխան բառեր (հմմտ. սաբ, սաբ-սաբ||սաոբ-սաոբ, սրբօվի, սաբիլ, սաբել, սաբվել, այլև՝ սաբել||սաբել-սաք||սաք ինդ ինէլ, սաբ-սաբ||սաբ-սաբ, սաբել||սաբել, սիքսաքէլ) ունենալով՝ իմաստային տարբերակումներ կամ նրբերանգներ են առաջ բերել նրանց միջև, «մթազնելով» սաբ-ից սաբ||սաբ-ի ծագումը:

19. ՍՔԱՌԱՄ

Առաջին անգամ տեղ է գտել Հր. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանում» հետևյալ բնութագրմամբ. «ՍՔԱՌԱՄ. Ղզ. սառած: Կրկնաբար կրկնի սառած-սքառած²⁹»: Հմմտ. «+ՍՔԱՌԱՄ (իբրև հֶסֶר, ձև սառածի), ած. սառած, Սառած-սառած ոտներ³⁰»: Տարբեր առիթներով այդ բառին անդրադարձել են նաև պրոֆեսորներ էդ. Աղայանը և Գ. Զահուկյանը, որոնցից առաջինն այն համարել է սիբ||սիբ + առիլ < առնուլ (> սրբառիլ «մրսել») բառերից առաջ եկած բարդություն³¹, իսկ երկրորդը դասել է ևս «Հ. Ն. Տ, ՍԱ-հայ. ս. շ» հնչյունափոխությամբ հատկանշվող այն արմատների շարքը, «որոնք շեղվում են հայերենի բնորոշ օրինաչափություններից և էն-

27 Նշված բառերի այդ և այլ նշանակությունների մասին տե՛ս Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հատ. 4, էջ 195 և 196:

28 Այդ մասին տե՛ս Կ. Ս. Գավթյան, Լեոնային Ղարաբաղի բարբառային թարեզը, էջ 462, ուր հեղինակը փաստորեն առաջինն է ձիշտ բացատրել սաբ-ի առաջացումը:

29 Հր. Աճառյան, Հայերեն դավառական բառարան, էջ 989:

30 Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հատ. 4, էջ 284:

31 Տե՛ս էդ. Աղայան, Մեղրու բարբառը, Երևան, 1954, էջ 286, 329, ուր ներկայացված անորոշ ղերբայածին փոխարեն, այլ բարբառներում, սակայն, գործածական են սոսկ հարակատար ու վաղակատար ղերբայածները:

թաղբում են ծտար ևնթաշերտ կամ որևէ հնդեվրոպական լեզվից հին փոխառություն, որի աղբյուրը չի պահպանվել կամ դեռևս հայտնի չէ»³²:

Այսպիսով, ներկայացվող բառի վերաբերյալ ցուցաբերվել են երեք տարբեր մոտեցումներ. և՛ չ. Աճառյանը և Ստ. Մալխասյանցը չեն բացատրել նրա ծագումը, այսպիսի պրոֆեսորներ էլ. Աղաջանը և Գ. Ջահուկյանը տվել են միանգամայն տարբեր մեկնություններ: Ուշագրավ ու հետաքրքրական է, որ Էրոֆ. Գ. Ջահուկյանը մինչև իսկ ընդհանուր գուղահեռ է անցկացրել մի կողմից հայերենի և մյուս կողմից՝ նորվեգերենի, շվեդերենի միջև. «Սֆառած (24) — նորվ. շվեդ. skare «ձյան վրայի սառած պինդ կեղև» և այլն [Տ. և. (s) ker — «խորշումել, կեճոտվել, տեսարթ կաշի, կեղև, թևի, շորացած, նիհար»]»³³:

Սակայն հարկ է ամենից առաջ ասել, որ «սքառած»-ը ոչ թե մի ձուլարմատական բառ է, այլ բայի ղերբայական ձև է՝ հարակատար, որ լավագույնս հաստատվում է սառած-սֆառած հարադրական բարդության առաջին բաղադրիչի (ստուգել||ստուգել-սառած) նույնպես հաճախաբար լինելու հանգամանքով, հմմտ. անցած-գնացած, բերած-աարած, ծլած-ծաղկած, մեռած-պրծած և այլն:

Երկրորդ՝ իբրև գուղահրական բայական բարդության բաղադրիչ, սֆառած ղերբայաձևը Ղազարից բացի գործածական է նաև այլ վայրերում՝ Գանձակի (Կիրովաբադի), Շամխորի, Խանլարի խոսվածքներում³⁴, ինչպես նաև Գորիսի բարբառում, օրինակ՝ Շատ սառած-սրքառած կրնէլ ա, չնդրհէնց մը պան ասէց, վէր մրնացի սառած-սրքառած, ճաշը սառած-սրքառած ա և այլն:

Երրորդ՝ Գորիսի բարբառում՝ սֆառած հարակատար ղերբայաձևից բացի գործածվում է նաև սրֆառալ (<սքառեալ) վաղակատար ղերբայաձևը³⁵, ինչպես՝ Խոխան սառալ ա սրքառալ, Քէլզ հի՞նչ ա լալ, վէր սառալ էս սրբառալ: Վերջինիս համար հավաստի ու գեղեցիկ օրինակ է տալիս աշուղ Ուսուր օղլին՝ «Ինչո՞ւ եք ինձանից սառել սգառել»³⁶, ուր «սքառել»-ի փոխարեն սգառել ձևի գործածությունն իսկ հայտնի է դարձնում քննվող բառի ծագումը և ցույց տալիս, որ այն երկու արմատներից (սուղ առեալ > սրֆառալ, սուղ առած > սրֆառած) կաղմված բարդություն է, որի իսկությունն էլ հաստատվում է թե՛ իմաստաբանորեն և թե՛ հնչյունաբանորեն: Նախնական սառեալ-սուղ առեալ բարդության բաղադրիչները Գորիսի և այլ բարբառներում՝ դրանց հատուկ հնչյունափոխական օրենքներով կարող էին դառնալ և իրոք

32 Տե՛ս Գ. Բ. Ջահուկյան. Հայ բարբառագիտության ներածություն, էջ 317: Ի դեպ, ավելորդ չէ նշել, որ այդ աշխատության մեջ «գրաբարյան բաղադրյալ ձևի ղիմաց արմատական ձև» ունեցող բառերի շարքում իրար են դուգորդվել նաև «արբայ-արբ (Բր. Գրբ.), էրբ (Երբ.) «իշխանություն» բառերը (տե՛ս էջ 281), որոնցից վերջինի մասին Հր. Աճառյանը, սակայն, ժամանակին զրել է. «Այս բառն իմ գավառական բառարանում, էջ 156ա, համարել եմ աբֆայ բառի արմատը: Չարաշար սխալ: Բառս օտար փոխառություն է թուրք-թաթարական լեզուներից» (տե՛ս Հայերեն արմատական բառարան, հատ. Ա, էջ 347):

33 Տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 327:

34 Դրանց մասին ես մեզ տեղյակ է պահել Կ. Ա. Դավթյանը:

35 Դրա գործածությունը, անշուշտ, չի բացառվում նաև այլ բարբառներում ու խոսվածքներում:

36 Տե՛ս Ուսուր օղլի (Սարգիս Հովսեփյան), Էջարի ընարը, Բաբու, 1894, էջ 92:

դարձել են սառալ-սրբառալ (վերջինս, անշուշտ, սուգ առեալ > սուգ||սոգ առալ > սրբառալ ընթացքով)։

Նույն հիմունքով է կազմվել նաև հարակատարը՝ սառած-սրբառած, որ տվելի շատ ու հստակապես գործածվելով՝ հիմք է ծառայել սրբառած-ը ինքնուրույն բառային միավոր ճանաչելու համար։ Եվ քանի որ սրբառալ (— սրառել) և սրբառած (= սրառած) դերբայների ծագում են սուգ առեալ, սուգ առած հարադրական ձևերից, նախապես դրանց՝ սուգ առածի՝ սղվորի՝ սղավորի վիճակը, դրությունն արտահայտողի նշանակությամբ էլ գործածվել են սառալ-սրբառալ, սառած-սրբառած գուցորդական բարդությունների մեջ, բնականորեն արտահայտելով խիստ սառել, կամ սառած, ընդարձացել կամ ընդարձացած, այլև խիստ մեղմ կամ մեղմած իմաստները։

ИСТОЛКОВАНИЯ ДИАЛЕКТНЫХ СЛОВ

Доктор филол. наук А. С. МАРКАРЯН

(Р е з ю м е)

В статье рассматривается происхождение следующих диалектных слов: գուլի («индейка»), կիզել («бояться»), խոզնրհառ (употребляется с глаголом անել «делать» или լինել «быть» — խոզնրհառ անել «измучить до смерти», խոզնրհառ լինել — «измучиться до смерти»), հախկ («1. Доля пахотной земли плугарей по товариществу и взаимному согласованию. 2. Очередь каждого из этих плугарей»), սաբ (употребляется в словосложениях в значении «снаряжение»), սրբառած (употребляется в основном с причастной формой սառած, սառած-սրբառած «1. Онемевший, оцепеневший. 2. Простудившийся». На основе семантико-фонетического анализа делается вывод, что первое из них имеет звукоподражательное происхождение, а остальные восходят соответственно к первоначальным формам գոզել («мочиться»), խառազանհառ (близкий к «кнотом»), հաղբ («сотрудничество»), սարբ («снаряжение»), սղառած < սուգ առած («траурный», «в трауре»).